# Տ. Ա. ԻԶՄԱՅԼՈՎԱ

Լենինգրադում, 1989 թ. սեպտեմբերի 12-ին, կյանքի ութսուներկուերորդ տարում վախճանվեց Տատյանա Ալեքսեևնա Իզմայլովան՝ հայ միջնադարյան արվեստի ամենահեղինակավոր դիտակներից մեկը։

Տ. Իզմայլովայի կյանքի հինգ տասնամյակները անմնացորդ նվիրված են հայ արվեստի գանձերի ուսումնասիրմանը։ Նա Լենինգրադի Պետական էրմիտաժի հին գիտնականների սերնդի վերջին մոհիկաններից էր, մեծանուն հայագետ Հովսեփ Օրբելու աշակերտներից և իր մեջ խտացնում էր նախահեղափոխական շրջանի ռուս մտավորականության լավագույն գծերը։ Տ. Իզմայլովայի կյանքը սերտորեն միահյուսված էր մեր պատմությանն ու արվեստին, այնքան բնական ու ներդաշնակ, որ երբեմն տարօրինակ էր թվում նրա՝ Լենինգրադում բնակվելը։

Տ. Իզմայլովան հեղինակել է հարյուրի հասնող գիտական աշխատություններ, կազմել հայ արվեստին նվիրված ցուցահանդեսների ցանկեր և ուղեցույցներ, անհամար դասախոսություններ կարդացել՝ ժողովրդականացնելով հայ միջնադարյան արվեստի հայտնի ու անծանոթ մասունքները։ Տարիներ շարունակ նա ղեկավարել է Էրմիտաժի Առաջավոր Ասիայի և Կովկասի բաժինը, մեծ ջանքեր ներդրել Արևելքի բաժնի հավաքածուների ժողովրդականացման ու ցուցահանդեսների կազմակերպման գործում։ Նա բազմաթիվ զեկուցումներով հանդես է եկել Էրմիտաժի գիտական նստաշրջանների ժամանակ, Հայաստանում և Վրաստանում կազմակերպված հանրապետական և միջազգային գիտաժողովներում, արտասահմանյան բյուզանդագիտական և հայագիտական համագումարներում։

Իզմայլովային երբեք պետք չէր խնդրել գրախոսելու այս կամ այն հրատարակությունը։ Նա պարզապես իր պարտքն էր համարում ռուս ընթերցողին ներկայացնել հայ միջնադարյան արվեստի մասին արտասահմանում և մեր երկրում տպված գրքերը, անել հարկ եղած լրացումները, ուղղումներն ու տալ դրանց արժանի գնահատականը։ Նրա գրած բազմաթիվ գրախոսականներն ինքնին լուրջ գիտական աշխատություններ են։ Նրա հոդվածների շնորհիվ է, որ Մոսկվայում հրատարակվող «Վիզանտիյսկի վրեմեննիկ» գիտական պարբերականում տարիներ շարունակ ներկայացվել է հայ մանրանկարչությունը։ Տ. Իզմայլովայի երկերից կարելի է բազմաթիվ հատորներ պատրաստել, և նրա աշխատություններն ուսումնասիրողը կարող է համոզվել, որ գործ ունի հայագիտական պատկառելի մի ժառանգության հետ։

Տ. Իզմայլովան սովորել է Լենինգրադի համալսարանում և Զուբովյան դասընթացներում։ 1930 թ. ապագա գիտնականը աշխատանքի է ընդունվում Պետական էրմիտաժում, որտեղ և աշխատում է ողջ կյանքում։ 1936 թ. հնագիտական արշավախմբի կազմում Տ. Իզմայլովան, որպես Հովսեփ Օրբելու ասպիրանտ, մասնակցում է Ամբերդի պեղումներին։ Վրա հասած պատերազմը խանգարում է երիտասարդ գիտնականին պաշտպանել արդեն պատրաստ թեկնածուական դիսերտացիան։ Այդ ահեղ տարիներին (1941—1946) Իզմայլովային, էրմիտաժի մյուս աշխատակիցների հետ, վստահվում է թանգարանային էվակուացված արժեքների պահպանության գործը՝ Սվերդլովսկում։ 1944 թ. նա Մոսկվայի համալսարանում պաշտպանում է «XIII դ. Հայաստանի ճարտարապետական հուշարձանների դեկորատիվ ձևավորումը» խորագրով թեկնածուական դիսերտացիան, իսկ 1971 թ.՝ դոկտորական դիսերտացիա՝ «XI դ. հայկական մանրանկարչությունը» թեմայով։

Անդրանիկ գիտական հոդվածը, որը վերնագրված էր «Երկու ճարտարապետական բեկորներ Ամբերդից», անվանի արվեստաբանը հրատարակել է 1939 թ.։ Այն նվիրված է Ամբերդի միջնադարյան կառույցների քարե բեկորների քննությանը։ Այդ տարիներին հրատարակված հոդվածների թվում իր կարևորությամբ հատկապես առանձնանում է Սևանի վանքից ծագող IX դ. քանդակազարդ խոյակների՝ պահպանված ամենահին հայկական փայտե ստեղծագործությունների հետազոտությանը նվիրված աշխատությունը («Սևանի խոյակները»), որտեղ Իղմայլովան մատնանշում է այն գեղարվեստական առնչությունները, որոնք գոյություն ունեն այդ հուշարձանների և արաբական խալիֆաթի IX դ. փայտակերտ աշխատանքների միջև։ Այդ ընդհանրությունները գիտնականը բացատրում է արաբական ջինուիների կառուցման գործում հայերի մասնակցության իրողությամբ։ «XIII դ. սկզբի Անիի երկու հուշարձանների (Տիգրան Հոնենցի և Բաղտաղեկիի եկեղեցիներ) դեկորատիվ ձևավորումը» հոդվածը նվիրված էր 1215 թ. Տիգրան Հոնենցի կառուցած ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և Բաղտաղեկի տիկնոջ XIII դ. սկզբին պատվիրած տաճարի արտաքին ձևավորման հետազոտությանը։ Հիշյալ երկու կառույցների ուսումնասիրությունը արվեստաբանին բերում է այն եզրակացությանը, որ դրանք ներկայացնում են XII—XIII դդ. Հայաստանի զարդային հնավանդ գեղարվեստական ուղղությունը։ Տ. Իղմայլովան գտնում է, որ գեղարվեստական այդ ուղղության ակունքները անհրաժեշտ է փնտրել X—XI դդ. հայկական ճարտարապետության մեջ։ Մեկ այլ հոդվածում («Մշակութային ժառանգությունը Անիի հուշարձանների ձևավորման մեջ») գիտնականը X—XI դդ. գեղագիտական դիրքորոշումները պարզելու նպատակով քննության առարկա է դարձնում այդ ժամանակի ջինուիների ճարտարապետական-դեկորատիվ և դարդարվեստային հորինվածքները։ Շիրակի, մասնավորապես Անիի, ինչպես նաև Սյունիքի որոշ կառույցների ճարտարապետական-դեկորատիվ առանձնահատկությունների, մանավանդ պորտալների հորինվածքների նկարագրի մեջ արվեստաբանը նկատում է հելլենիստական նախօրինակից ծագող ձևեր, որոնք, հայտնի լինելով դեռևս V—VII դդ. հայկական կառույցներում, լայն տարածում են գտնում XI դարում։ Հետևելով V—VII դդ. ջինուիներից հայտնի առանձին նախշաձևերի զարգացմանը X—XI դդ. հուշարձաններում, Տ. Իղմայլովան մատնանշում է Բաղրատունիների ժամանակաշրջանի արվեստում դրանց կրած փոփոխությունները։ Գիտնականը նկատում է, որ զարդային հինավուրց մանրամասների երևան դալը պայմանավորված է դեպի վաղ շրջանի ժառանգությունը ուղղված հայացքներով ու կողմնորոշումներով, որոնց արտահայտությունները տեսանելի են նաև այդ ժամանակի դրականության մեջ։ Տ. Իղմայլովայի այս շրջանի ուսումնասիրությունների մեջ արդեն նկատելի է նրա յուրօրինակ հակումը հայկական զարդարվեստի նկատմամբ, ձգտումը՝ թափանցելու անանուն քարգործների նախշային լեզվի խորքերը։ Առաջին ուսումնասիրություններից է գալիս նրա հմտությունը՝ գտնելու, իրար մոտ բերելու և ղուտ զարդային հատկանիշներով միմյանց կապելու, անփորձ դիտողին երբեմն տարբեր թվացող հայկական ձեռագրերի մանրանկարները։ Զարդերը թարգմանելու այդ կարողությամբ և գեղագետի նուրբ դիտողականությամբ նա թվագրում է հաճախ ուսումնասիրման համար բարդ, «ամենասակավախոս» մատյանները և գտնում դրանց կատարման հավանական վայրը։ Իր հոդվածներով, զեկուցումներով, գրքերով և անմիջական դրույցներով Տ. Իղմայլովան գործընկերներին ու աշակերտներին էր հաղորդում հին վարպետների՝ նախշերը խոսեցնելու գաղտնիքները։ Հայ մանրանկարչության հետազոտությունը գիտնականը ձեռնարկում է 60-ական թվականների սկզբից։ Այդ տարիներին նա քննության առարկա է դարձնում XI դ. հայկական գրքարվեստը, մեկ առ մեկ քննում այդ ժամանակաշրջանի նկարազարդ մատյանները և առանձին հոդվածներ նվիրում դրանց ուսումնասիրմանը։ Երկու տասնամյակ տևած հետազոտությունների փառավոր պսակն է կազմում արվեստաբանի գիրքը, որը Մոսկվայում լույս տեսավ 1979 թ.՝ «XI դ. հայկական մանրանկարչությունը» վերնագրով։ Այն իրավամբ կարող է դասվել խորհրդային արվեստագիտության լավագույն երկերի շարքը։ Այդ մենագրությունից առաջ 1962 թ. Տ. Իղմայլովան Մարիամ Այվազյանի հետ հրատարակել է «Հայաստանի արվեստը» դիրքը։ Այստեղ նրա գրչի արդյունքն են «Ներածությունը», «Ամփոփումը», հնագույն շրջանից մինչև XVIII դ. ընկած ժամանակաշրջանում ստեղծված գեղարվեստական ժառանգությունը քննող հատվածները, ինչպես նաև խորհրդային Հայաստանի նարտարապետությանը վերաբերող բաժինը։ Անվանի արվեստաբանը գրել է նաև այլ ուսումնասիրություններ, որոնք հրատարակվել են հոդվածների ձևով։ Այսպես՝ «1325 թվականին Ճենովայում գրված հայկական ձեռագիրը և նրա 1347 թվականի արծաթե կազմը» հոդվածում հետազոտվում են 1325 թ. Ճենովայի ս. Բարթուղիմեոս առաքյալ վանքում կամ եկեղեցում գրիչ Աստվածատուրի ընդօրինակած ձեռագրի մանրանկարները և նույն մատյանի 1347 թ. արծաթե կազմը։ Տ. Իղմայլովայի կարծիքով, հիշյալ

մանրանկարների գեղարվեստական ակունքները անհրաժեշտ է փնտրել կիլիկյան գրչարվեստում։ Ըստ նրա, այդ նկարազարդումների գրաֆիկական կատարումը հիշեցնում է XIV դ. գլաձորյան մանրանկարչությունը։ Ուշագրավ է, որ արծաթե կազմի վրա պատկերված ավետարանիչները և գլաձորյան որոշ ձեռագրերի համանման պատկերները ծագում են միևնույն հնավանդ նախօրինակներից։ Տ. Իզմայլովայի այս ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հայ-իտալական գեղարվեստական առնչությունների հետազոտման տեսակետից։ 60-ական թվականներին հրատարակված հոդվածների շարքում իր կարևորությամբ առանձնանում է նաև «1290 թվականի կիլիկյան ձեռագիրը և նրա վարպետ Թորոս Փիլիսոփան» հոդվածը։ Այստեղ բացահայտված է գլաձորյան նշանավոր նկարիչ Թորոս Տարոնացու օգտագործած նախօրինակներից մեկը, մատնանշված է Թորոս Փիլիսոփայի ծաղկած ձեռագրի նշանակությունը Վասպուրականի շրջանում ստեղծված մատյանների համար։ Տ. Իզմայլովայի հոդվածների թվում անհրաժեշտ է հիշատակել «Մուրղանեցու օրինակը հայկական մանրանկարչության մեջ» աշխատությունը, որն ընդգրկում է Գրիգոր Մուրղանեցու նախօրինակի և նրա հետ կապված XII—XIII դդ. ձեռագրերի քննությանը նվիրված ուսումնասիրությունը.

Իր տեսական հարցադրումներով և եզրահանգումներով ուշագրավ է «Հայկական Վերածնության խնդրի շուրջ» հոդվածը։

Թե՛ ձեռագրագիտական և թե՛ գեղարվեստական առումով արտակարգ կարևորություն ունի Տ. Իզմայլովայի կազմած Էրմիտաժի հայկական նկարազարդ ձեռագրերի ցուցակը։ Գիտնականի գրչին են պատկանում XII—XIII դդ. Խարբերդի, Կարինի, Անիի, Սյունիքի, Կիլիկիայի գրքարվեստի առանձին հուշարձաններին նվիրված աշխատանքները։ Կյանքի վերջին տարիներին Տ. Իզմայլովան պատրաստեց և հրատարակեց բազմաթիվ հոդվածներ XII դ. այնպիսի ձեռագրերի վերաբերյալ, որոնք գրեթե անծանոթ էին հայագիտությանը։ Ճշգրիտ թվագրում չունեցող շատ ձեռագրեր նրա շնորհիվ իրենց որոշակի տեղը ստացան XII դ. հայ գրքարվեստի պատմության մեջ։ Նա քննության առավ այնպիսի մատյաններ, որոնք վրիպել էին մյուս գիտնականների ուշադրությունից սակավաթիվ նկարազարդումներ ունենալու կամ միայն զարդային մանրամասներով ձևավորված լինելու պատճառով։ Կարելի է ասել, որ նա աշխատում էր ամենադժվար ուսումնասիրելի ձեռագրերի վրա։ Շնորհիվ նրա հրապարակումների, XII դ. հայ գրքարվեստը այժմ մեզ է ներկայանում ավելի շոշափելիորեն։ Տ. Իզմայլովայի այդ ուսումնասիրություններից առաջ գոյություն ուներ այն տեսակետը, թե իբր սելջուկյան տիրապետության հետևանքով անկում է ապրել նաև XII դ. հայ մանրանկարչությունը։ Գիտնականի՝ այս թեմային վերաբերող հոդվածները կողք-կողքի դնելիս կարելի է համոզվել, որ անգամ այդ ծանր քաղաքական պայմաններում հայ ծաղկողները շարունակում էին հոյակապ ձեռագրեր նկարազարդել, մեծ չափով նախապատրաստելով հայ գրքարվեստի աննախընթաց զարգացումը XIII դարում։

Տ. Իզմայլովան, կարծես, կանխազգալով իր մոտալուտ վախճանը, շատ էր անհանգստանում, որ չի հասցնի ավարտել Մաշտոցի Մատենադարանի տնօրինության հանձնարարած «12-րդ դարի հայ մանրանկարչությունը» ալբոմը։ Մահվանից անմիջապես առաջ նա պատրաստեց ու Հայաստան ուղարկեց այդ աշխատությունը, որը հավանորեն կտպագրվի մոտակա տարիներին։ Տ. Իզմայլովան ղեկավարել է և ընդդիմախոսել հայ արվեստի վերաբերյալ գրված մի շարք դիսերտացիոն աշխատություններ։

Տ. Իզմայլովան արտակարգ հետաքրքիր մարդ էր, հոյակապ զրուցակից, ութսունամյա հասակում անգամ պահպանել էր սուր հիշողությունը և հումորը։ Նա հարազատի պես կապվում էր իր գործընկերների հետ, դառնում նրանց հավատարիմ բարեկամը, վշտանում նրանց անձնական անհաջողությունների կամ կորուստների համար։ Սերտ կապեր ուներ հայ գիտնականների, մանավանդ մատենադարանցիների հետ։ Էրմիտաժում կար մի անձնվեր բարեկամ, որ ուրախանում էր մեր հաջողություններով և տրտմում ցավի պահին։

Գիտական գործունեության հիսնամյակի և հայագիտության բնագավառում ունեցած վաստակի համար Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը նրան պարգևատրել էր Մեսրոպ Մաշտոցի հուշամեդալով, իսկ ծննդյան ութսունամյակի և խորհրդային արվեստագիտությանը մատուցած ծառայությունների համար նա արժանացավ ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատվոգրին։ Տ. Իզմայլովայի մահվամբ ասպարեզից հեռացավ Հովսեփ Օրբելու ստեղծած ռուս հայագետների սերունդը, որի ներդրումը, սակայն, կմնա անկրկնելի և յուրօրինակ՝ հայ արվեստի գիտական յուրացման գործում։

Լ. Բ. ՉՈՒԳԱՍԶՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու